

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՓՈՔՐ ԿՈՐԻԻՆԻ ՆԵՂԻՆԱԿԸ

Կար ժամանակ մը երբ բանասէրները կ'ընդունէին թէ Փոքր Կորինը կը ներկայացնէր Կորին վարդապետի հարազատ երկը, իսկ Մեծ Կորինը աւելի ուշ կատարուած խմբագրութիւն մըն էր<sup>(1)</sup>: Անգրագոյն հետազոտութիւններով հաստատուեցաւ թէ սխալ էր այս կարծիքը. Կորին վարդապետի նախնական երկը Մեծ Կորինն էր, որ հետագային համառոտուած էր անծանօթ անձի մը ձեռքով, Սորենացիի Պատմութեանէն պատուաստուած կարևոր ընդմիջարկումներով<sup>(2)</sup>:

Արդ, ո՞վ էր այդ անծանօթը որ Փոքր

Կորինի խմբագրութիւնը հրատարակ հանած էր:

Մեր մատենագրութեան մէջ ունինք նման պարագայ մը Սոկրատ Սքուստիկոսի Եկեղեցական Պատմութեան վերաբերմամբ: Այդ գիրքն ալ մեզի հասած է երկու տարրերի ձևերով, որոնք կը յորջորջուին Մեծ Սոկրատ և Փոքր Սոկրատ<sup>(3)</sup>: Ասկէ մտաքառորդ դար առաջ, Պրօֆ. Ն. Ազոնց յօդուածով մը ուղեց հաստատել թէ վերոյիշեալ Փոքր Սոկրատի հեղինակն էր Յակոբ Վրդ. Ունհայեցի, վախճանած 1085 թուին<sup>(4)</sup>:

Այդ հաստատումը հիմնուած էր 1085 թուին Ունհայի մէջ վախճանող Սանահնեցի կամ Քարափնեցի Յակոբ վարդապետի<sup>(5)</sup> և Ունհայեցի Յակոբ վարդապետի<sup>(6)</sup> նոյնացման վրայ: Մխիթար Այրիվանեցի 641 թուականին ներքև ունի.

«Փրիոն Տիրակացի»:

«Յակոբ Ունհայեցի արար զնոր թարգմանութիւն»:

Ազոնց կը գրէ. «Թիւր հարկաւ ճիշդ չէ, և այս չէ կարևորը»<sup>(7)</sup>: «Ժամանակագիրը յայտնում է որ այս ինչ թուին Փրիոն Տիրակացիի թարգմանել է Սոկրատը և յիշում ի դէպ որ Յակոբ Ունհայեցի արել է երկրորդ թարգմանութիւնը այսինքն Փոքր Սոկրատը»<sup>(8)</sup>:

Ազոնցի կատարած այս նոյնացումը ճիշդ չէ սակայն: Յակոբ Ունհայեցիին տարրեր անձ է, Յակոբ Սանահնեցիին տարրեր: Մխիթար Այրիվանեցի ճիշդ տեղը զետեղած է Ունհայեցիին ինչպէս կը հաստատուի Մխիթար Ասորիի հետեւեալ տեղիքով, Ասորաց ԶԿԶ և Հայոց ՂԳ = 644 թիւին ներքև.

«Ի սոյն ժամանակս էր սուրբ վարդապետն Յակոբ Ունհայեցիին ի գաւառէն Անտիոքայ, որ ուսաւ լեզու և գիր յունարէն և երբայեցիերէն, որ գնաց և եմուտ պատ-

եան, վասպ. վանքերը, Բ., էջ 409-410:  
2. — Սալմաստարան, 1534ին, Աղթամարցի Գրիգորիս Կաթողիկոսին համար. — Հանդ. Ամս., 1915, էջ 27:

ԺԱ. — Թումայ Եղեգեցի, Ծաղկող, 1573ին ծագկած է Աստուածատուր Արեղայի օրինակած Աւետարանը. — Ե. Լալայեան, Յուցակ Զեռ, վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 680:

ԺԲ. — Տիրատուր Արեղայ, 1578ին օրինակած է մէկ Աւետարան Տէր Գրիգորի համար. — Հանդ. Ամս., 1925, էջ 471-2:

ԺԳ. — Կարապետ Եպիսկոպոս, որդի Գրիգորի և Սայրապուլթանի, աշակերտ Տէր Աստուածատուր քաջ քարտուղարի, 1585ին Արծուարեր Ս. Աստուածածնի վանքին մէջ, նորոգած և կազմած է մէկ Աւետարան. — Սմբատեան, Գեղարքունի, էջ 48-9:

ԺԴ. — Գրիգոր Կրօնաւոր, 1613ին օրինակած է մէկ Գրիգ. Հարցմանց, Գր. Տաթևացիի. — Կար., Յուցակ Զեռ. էջմիածնի, Թ. 831:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

(3) Հրատ. Մեսրոպ Վ. Տէր Մոզեսեան, 1897, վաղարշապատ:

(4) Սիոն, 1936, էջ 300-304:

(5) Մատթէոս Ունհայեցի, Երուսաղէմ, 1869, էջ 273:

(6) Մխիթար Այրիվանեցի, Մոսկովա, 1860, էջ 50:

(7) Սիոն, 1936, էջ 300:

(8) Նոյն, էջ 301:

ճառաւ ընդ հրէութեամբն, և թարգմանեաց զծածուկան Հրէիցն յասորի լեզու: Եւ արար մեկնութիւնս բազում գրոց, և եղև եպիսկոպոս Ուռհայոյ . . . »<sup>(9)</sup>:

Համեմատել նաև հետևեալ հատուածը. «Զի յուով զանազանութիւն գտանի յեւթանասնիցն թարգմանութիւնն, և զոր ունին Ասորիք, զայն որ Արգար արքայ ետ թարգմանել, և ստուգեաց Յակոբ Ուռհայեցի հնարիւք լեալ իբրև զմի ի Հրէիցն՝ զի մի՛ թագուսցեն զճշմարտութիւնն ի նմանէ»<sup>(10)</sup>:

Այս վկայութիւնները կը ցուցնեն թէ Մխիթար Այրիվանեցին «Յակոբ Ուռհայեցի արար զնոր թարգմանութիւն» ըսելով կը հասկնայ այս ասորի վարդապետին կատարած աշխատանքը, որ որևէ կապ չունի զայն կանխող «Փիլոն Տիրակացի» բառերուն հետ:

Հետևարար Սոկրատ Սքուստիկոսի Եկեղեցական Պատմութիւնը համառոտող անձը կը մնայ անյայտ:

Այժմ գառնանք Փոքր Կորիւնին: Նկատելով որ Փոքր Կորիւնի հեղինակը իր աշխատանքը կատարած է նոյն դիտումով և նոյն մեթոտով որ կը տեսնուի Փոքր Սոկրատի հեղինակին մօտ, մեզի շատ հաւանական կը թուի սա ենթադրութիւնը՝ թէ Փոքր Կորիւնի խմբագրութիւնն ալ գործն է այն հեղինակին որ կատարած է Փոքր Սոկրատի խմբագրութիւնը:

Մեր այս ենթադրութիւնը կը կարծենք թէ գոհացուցիչ կերպով հիմնաւորուած է հետևեալ ասութիւններով, որոնք բնորոշ են Փոքր Սոկրատի և Փոքր Կորիւնի խմբագրութիւնները յորինող առ այժմ անձանօթ հեղինակին:

1. — Սաղմոսիւք և օրհնութեամբք և երգովք հոգևորօք. — Փ. Սոկրատ, էջ 114: Փ. Կորիւն, էջ 42, 45:

2. — Ի փառս ամենասուրբ Երրորդութեանն. — Փ. Սոկրատ, էջ 114, 289, 485: Փ. Կորիւն, էջ 30, 40, 45:

3. — Լուսաւոր վարդապետութիւն. — Փ. Սոկրատ, էջ 209, 355, 418, 496, 501,

505, 523, 557: Փ. Կորիւն, էջ 7, 28, 34, 41, 43:

4. — Ի փառս և ի գովութիւն ամենասուրբ Երրորդութեանն. — Փ. Սոկրատ, էջ 234, 325, 549: Ի փառս և ի գովեստ ամենասուրբ Երրորդութեանն. — Փ. Կորիւն, էջ 36:

5. — Ի փառս և ի գովութիւն Աստուծոյ. — Փ. Սոկրատ, էջ 254, 291, 437: Փ. Կորիւն, էջ 35, 37, 42:

6. — Կուսութեամբ նահատակէր. — Փ. Սոկրատ, էջ 494: Կուսութեամբ նահատակեալ. — Փ. Կորիւն, էջ 36:

Մեր կարծիքով կարելի է որոշել նաև թէ այս երկու գործերէն Փոքր Կորիւնի խմբագրութիւնն է որ կատարուած է առաջին անգամ: Այս կարծիքը կը հիմնենք սա իրողութեան վրայ, որ վերոգրեալ ասութիւններէն երկուքը կը պատկանին Մեծ Կորիւնին, որմէ առնելով անձանօթ խմբագիրը կիրարկած է նախ Փոքր Կորիւնի մէջ և ապա Փոքր Սոկրատի խմբագրութեան ժամանակ:

Ակնարկուած այդ ասութիւններն են.

Ա. — Սաղմոսիւք և օրհնութեամբք և երգօք հոգևորօք. — Փ. Կորիւն, էջ 42, 45: Սաղմոսիւք և օրհնութեամբք և հոգևոր բարբառով. — Մ. Կորիւն, էջ 42: Սաղմոսիւք և օրհնութեամբք և հոգևոր ցնծութեամբք. — Մ. Կորիւն, էջ 45: Խմբագրողին կատարած փոփոխութիւնը կը մատնէ ժամագիրքի մաղթանքին ազդեցութիւնը. «Սաղմոսիւք և օրհնութեամբք և երգօք հոգևորօք . . . »<sup>(11)</sup>:

Բ. — Լուսաւոր վարդապետութիւն. — Մ. Կորիւն, էջ 7, 41:

Ուրեմն, վերոգրեալ տուեալներու համաձայն կը յանգինք սա եզրակացութեան թէ Փոքր Կորիւնի խմբագրութիւնը կատարուած է նախ քան Փոքր Սոկրատի խմբագրութիւնը: Այս երկու երկերը գործն են միևնոյն անձին որ տակաւին կը մնայ անյայտ:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

<sup>(9)</sup> Մխի. Ասորի, Երուսաղէմ, 1871, էջ 327:  
<sup>(10)</sup> Նոյն, էջ 3-4:

<sup>(11)</sup> Տգ. Երուսաղէմ, 1915, էջ 135: